



## «ԲՐՅՈՒՄՈՎՅԱՆ»

# ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՑՈՒԴԱՐՁԸ

### ԿԱՐԴԱՑԵՔ ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ

- 🔔 *Համագործակցության պայմանագրեր և ցանցային անդամակցություն*
- 🔔 *Միջազգային կրեդիտային շարժունության ծրագրեր*
- 🔔 *Հաջողության պատմություններ*
- 🔔 *Համատեղ կրթական ծրագրեր*
- 🔔 *Միջազգային ծրագրեր*
- 🔔 *Բարձրաստիճան հյուրերի և դեսպանների այցեր*
- 🔔 *Կոնֆուցիուսի ինստիտուտ*
- 🔔 *Օտար լեզվով ծրագրեր*
- 🔔 *Օտարերկրյա ուսանողների հարցումներ*
- 🔔 *Միջազգային գիտաժողովներ և սեմինարներ*

Միջազգայնացումը Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի (ԲՊՀ) ռազմավարական առաջնահերթություններից մեկն է՝ ուղղված ուսանողների, պրոֆեսորադասախոսական (ՊԳ) և վարչական կազմի միջազգային շարժունության խթանմանը, ուսումնական ծրագրերի միջազգայնացմանը, գործընկերային համագործակցության ընդլայնմանը և ԲՊՀ-ում միջմշակութային միջավայրի ստեղծմանը:



## Համագործակցության պայմանագրեր

Օտար լեզուների դասավանդման, թարգմանության, լեզվաբանության, հասարակության հետ կապերի և լրագրության, տուրիզմի, միջազգային հարաբերությունների, եվրոպագիտության, քաղաքագիտության, ինչպես նաև կառավարման և միջմշակութային հաղորդակցության ոլորտներում արձանագրված հաջողություններին նպաստում են ԲՊՀ-ի 125 գործող միջազգային պայմանագրերը, համաձայնագրերը և հուշագրերը ավելի քան 60 միջազգային համալսարանների հետ: 2020թ. հունիսից մինչև 2022թ. օգոստոս ընկած ժամանակահատվածում ԲՊՀ-ն կնքել է և վերակնքել է 40-ից ավել պայմանագրեր և համաձայնագրեր:

ԲՊՀ-ի միջազգային համագործակցության շրջանակը ընդլայնվել է ոչ միայն քանակապես, այլև տարածաշրջանային առումով՝ ընդգրկելով համագործակցության նոր տարածքներ, մասնավորապես Բրազիլիան, Չինաստանը, Նորվեգիան, Կորեան և այլն:

Համագործակցության պայմանագրեր են կնքվել և վերակնքվել նաև Ուրուգվայի հանրապետության համալսարանի, Ակադեմիական փոխանակման լեհական ազգային գործակալության (NAWA), Բիդգոշեի տնտեսագիտության համալսարանի, Պերուջայի օտարերկրացիների համալսարանի, Պեկինի օտարերկրյա ուսումնասիրությունների համալսարանի, Պիտեշտի համալսարանի, Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության Մշակույթի կենտրոնի, Ֆրանսիայի Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO) հետ:



*Վերակնքվել է համաձայնագիրը ԲՊՀ-ի և Ղալխանի օտար լեզուների համալսարանի միջև Կոնֆուցիուսի ինստիտուտի համատեղ կառավարման մասին: Համարվել է գործընկեր չինական բուհերի ցանկը նոր պայմանագրերի կնքմամբ հետևյալ համալսարանների հետ.*

⇔ *Թիենծինի մանկավարժական համալսարանի հետ*

⇔ *Չինաստանի Ժողովրդական Հանրապետության Հուբեյի համալսարանի հետ*



## «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության միջբուհական պայմանագրեր

ԵՄ-ի «Էրազմուս+» միջազգային կրեդիտային շարժունության ծրագրերի շրջանակներում առանցքայիններից են Ֆրանսիայի Լիլի, Իսպանիայի Ալմերիայի, Բուլղարիայի «Նեոֆիտ Ռիլսկի», Գերմանիայի Սաարլանդ, Դյուսելդորֆի, Բելգիայի Վիվեսի, Ռումինիայի Յաշիի Ալեքսանդր Իոան Կուզայի համալսարանների հետ համաձայնագրերը, ընդլայնվել է համագործակցության ցանկը և կնքվել են նոր պայմանագրեր հետևյալ համալսարանների հետ.

- ✓ Ավստրիայի Չայքուրգի Պարիս Լոդրոն համալսարան
- ✓ Լեհաստանի Ժեշուվի համալսարան, Լոդզի համալսարան
- ✓ Լատվիայի Վիդզեմե կիրառական գիտությունների համալսարան

Ինչպես նաև,

- ✓ վերակնքվել են Իսպանիայի Մուրսիայի Մուրբ Անտոնիո կաթոլիկ և Գրանադայի համալսարանների միջև Էրազմուս+ միջինստիտուցիոնալ պայմանագրերը:

### Ցանցային անդամակցություն

*ԲՊՀ-ն ընդդրայնում և նաև ներպետական և միջազգային ցանցային և գիտական համագործակցության և անդամակցության շրջանակները՝ ձեռք բերելու համագործակցության թիրախային գործընկերներ, ինչի արդյունքում 2020թ.-ին ԲՊՀ անդամակցել է 11, 2021թ.-ին 8 կառույցի: 2022թ.-ի հունվարին ԲՊՀ-ն դարձել է Եվրոպական համալսարանների ստոցիացիայի լիիրավ անդամ: Եվրոպական համալսարանների ստոցիացիան ներառում է ավելի քան 850 համալսարան:*

*2022 թ.-ի հունիսից ԲՊՀ-ն վերակցել է համագործակցությունը Եվրոպայի խորհրդի Ժամանակակից լեզուների եվրոպական կենտրոնի հետ (ECML):*



## Միջազգային շարժունության ծրագրերի մասնակիցներ

### Ուսանողներ



2020թ. հունիսից մինչև 2022թ. օգոստոս «Էրազմուս+» միջազգային ծրագրի շրջանակներում տեղի է ունեցել ուսանողների շուրջ 40-ից ավել շարժունություն, որից 4-ը՝ ներգնա: ԲՊՀ ուսանողները մեկ կիսամյակ ուսումնառելու հնարավորություն են ունեցել հետևյալ համալսարաններում.

- ✓ Իսպանիայի Վալադոլիդի համալսարան
  - ✓ Բելգիայի Վիվես կիրառական գիտությունների համալսարան
  - ✓ Ֆրանսիայի Լիլի համալսարան
  - ✓ Իսպանիայի Ալմերիայի համալսարան
  - ✓ Գերմանիայի Հայնրիխ Հայնեի անվան Դյուսելդորֆի համալսարան
  - ✓ Գերմանիայի Հայդելբերգի համալսարան
  - ✓ Գերմանիայի Սաարլանդի համալսարան
  - ✓ Ռումինիայի Պիտեշտի համալսարան
  - ✓ Իսպանիայի Գրանադայի համալսարան
  - ✓ Իսպանիայի Մուրսիայի Սուրբ Անտոնիո կաթոլիկ համալսարան
  - ✓ Ռումինիայի Յաշի Ալեքսանդր Իոան Կուզայի համալսարան
  - ✓ Բուլղարիայի Նեոֆիտ Ռիլսկի Հարավ-Արևմտյան համալսարան
  - ✓ Ավստրիայի Չայքբուրգի Պարիս-Լոդրոն համալսարան
- 
- 2022թ-ին առաջին անգամ ԲՊՀ-ն Ռումինիայի Յաշի համալսարանի հետ իրականացրել է նաև երկամյա փորձնակության ծրագիր (traineeship) ԲՊՀ ուսանողների համար:
  - 2022թ.-ի մարտին ուսանողների միջազգային շարժունության խթանման համար ԲՊՀ-ն փոխըմբռնամբն հուշագիր է կնքել «Էրազմուս ուսանողական ցանց Երևան» երիտասարդական հասարակական կազմակերպության հետ՝ արտագնա և ներգնա ուսանողներին աջակցություն տրամադրելու համար:





## ՊԴ և վարչական աշխատողներ

2020թ. հունիսից մինչև 2022թ. օգոստոս տեղի է ունեցել ՊԴ և վարչական կազմի համար նախատեսված շուրջ 60 շարժունություն, որից 17-ը ներգնա: Հատկանշական է ՊԴ կազմի ներգնա շարժունության անը, որը էլ ավելի է ամրապնդում ԲԴՀ և իր գործընկեր համալսարանների միջև արդյունավետ համագործակցությունը:

Եվ այսպես, ԲԴՀ-ն հյուրընկալել է դասախոսների հետևյալ համալսարաններից.

- ✓ Գերմանիայի Հայնրիխ Հայնեի անվան Դյուսելդորֆի համալսարան
- ✓ Իսպանիայի Ալմերիայի համալսարան
- ✓ Ավստրիայի Չալցբուրգի Պարիս-Լոդրոն համալսարան
- ✓ Իսպանիայի Վալյադոլիդի համալսարան
- ✓ Բելգիայի Վիվես կիրառական գիտությունների համալսարան
- ✓ Լատվիայի Վիդձեմե կիրառական գիտությունների համալսարան
- ✓ Ռուսիայի Տրանսիլվանիայի Բրաշովի համալսարան
- ✓ Լեհաստանի Լոդզի համալսարան
- ✓ Ռումինիայի Պիտեշտի համալսարան
- ✓ Իսպանիայի Մուրսիայի Մուրբ Անտոնիո կաթոլիկ համալսարան

## Հաջողության պատմություններ

Միջազգային շարժունության ծրագրերի իրականացումից հետո մասնակիցների ձեռքբերված փորձի տեղայնացման, ինչպես նաև լուսաբանման նպատակով 2021թ.-ին ԲԴՀ ԱԿՄՀ վարչության կողմից մշակվել է ձևաչափ, որի միջոցով իրականացվում է ծրագրերի մասնակիցների փորձի և ձեռքբերումների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում և լուսաբանում. արդյունքում ԲԴՀ կայքում պարբերաբար լուսաբանվում են միջազգային շարժունության հնարավորությունները և խթանվում է ծրագրերին մասնակցությունը: Հաջողության պատմություններից կարող եք ծանոթանալ [այստեղ](#):

*ԲԴՀ-ի տեսանելիության բարձրացման նպատակով պարբերաբար թարմացվում է ԲԴՀ-ի պաշտոնական կայքի Արտաքին կապերի և միջազգային համագործակցության (ԱԿՄՀ) վարչության [ենթաէջը](#): Այստեղ կա ԲԴՀ-ի ԱԿՄՀ վարչության էջերի գործունեությունը մի քանի սոցիալական հարթակներում՝ [ֆեյսբուք](#), [ինստագրամ](#) և [տելեգրամ](#):*



## Շարժունության ծրագրերի մասնակիցները ԲՊՀ-ում



🏢 Գերմանիայի Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի համալսարանի Գերմանագիտության ինստիտուտի դասախոս, գիտաշխատող և ասպիրանտ Փաբիան Վիլհելմիի երկշաբաթյա դասախոսությունները ԲՊՀ-ում, որին նախորդել էր ԲՊՀ գերմաներենի դասախոսների Դյուսելդորֆի համալսարան կատարած այցը: Փաբիան Վիլհելմին դասախոսություններով հանդես եկավ Գերմանիայի մշակույթի, երկրագիտության և գրականագիտության թեմաներով:

🏢 Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի անվան համալսարանի Գերմանագիտության ինստիտուտի դասախոս, պրոֆեսոր Սիբիլե Շոնբորնը հանդես եկավ դասախոսությունների շարքով ԲՊՀ-ի գերմանախոս և գերմաներենն ու գերմանական մշակույթն ուսումնասիրող ուսանողների համար, ինչպես նաև ներկայացրեց Դյուսելդորֆի Հայնրիխ Հայնեի անվան համալսարանում ուսանելու առկա հնարավորությունների մասին:





Ալմերիայի համալսարանի հետազոտության կառավարման բաժնի աշխատակից **Լեոնարդո Չինեայի** մեկշաբաթյա դասախոսությունները ԲՊՀ-ում իսպանական մշակույթի և իսպանացիների վերաբերյալ կարծրատիպերի, հետազոտության կառավարման և դրա կիրառման համար անհրաժեշտ մեթոդոլոգիայի թեմաներով:

ԲՊՀ էին ժամանել Բուլղարիայի «Նեոֆիտ Ռիլսկի» Հարավ-Արևմտյան համալսարանի 5 ներկայացուցիչներ, ովքեր մի շարք հանդիպումներ են ունեցել ԲՊՀ-ի տարբեր ստորաբաժանումների աշխատակիցների հետ և դասախոսություններով հանդես եկել ԲՊՀ տարբեր ֆակուլտետներում:



ԲՊՀ գործընկեր Վերոնայի համալսարանի պրոֆեսոր **Շտեֆան Ռարանուսը** դասախոսություններ է կարդացել ԲՊՀ Թարգմանչական գործ գերմաներեն-հայերեն մագիստրոսական ՄԿԾ-ի ուսանողների համար:








## Համատեղ կրթական ծրագրեր

2020, 2021 և 2022թթ. շարունակվել են ԲՊՀ-ի և ԱՊՀ ցանցային, Փարիզ-Սորբոն 4, Հայլե Վիթենբերգի Մարթին Լյութեր և Դալիանի օտար լեզուների համալսարանների հետ կրթական ծրագրեր՝ համատեղ դիպլոմներ շնորհելու համար:



- ✓ Հատկանշական է ԲՊՀ-ի և Ռուսաստանի Ժողովուրդների բարեկամության ռուսական համալսարանի (РУДН) միջև ստեղծված արդյունավետ համագործակցության շրջանակներում ԲՊՀ Սոցիալական գիտությունների և սերվիսի ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի [Յուլիա Մարգարյանի գրանցած հաջողությունները](#): Յուլիան իր ուսման ընթացքում ցուցաբերել է բարձր ակադեմիական

առաջադիմություն,

ինչպես նաև մասնակցություն է ունեցել օլիմպիադաների, մրցույթների, կոնֆերանսների՝ պատվով ներկայացնելով ԲՊՀ-ն:

- ✓ Մեկ այլ հաջողություն է գրանցել [ԲՊՀ ասպիրանտ Լուսինե Արզարյանը](#), ով ԲՊՀ-ի և Սորբոն համալսարանի համադիպլոմավորման ծրագրի շրջանակներում 2022թ. ապրիլին Սորբոնում պաշտպանել է իր թեկնածուական ատենախոսությունը:







## Միջազգային ծրագրեր

ԲՊՀ-ում միջազգայնացման գործընթացները տարաբնույթ և բազմաաղբյուր են և ներառում են համալիր գործընթացներ՝ հիմնված միջազգայնացման ռազմավարական առաջնահերթությունների վրա: 2020-2022թթ. շարունակվել և ավելացել են օտարերկրյա և միջազգային կազմակերպությունների դրամաշնորհներով իրականացվող ծրագրերը՝ ուղղված բուհի կարողությունների զարգացմանը: Մասնավորապես.

- ⇨ օտարերկրացի ուսանողների ընդունելության և որակավորումների ճանաչման ինստիտուցիոնալ ընթացակարգերի մշակում,
- ⇨ ձեռնարկատիրական կրթության խթանում,
- ⇨ հետազոտության կառավարում և բաց գիտության կարողությունների հզորացում,
- ⇨ ուսանողների ձեռնարկատիրական հմտությունների ամրապնդում,
- ⇨ գրադարանային ցանցի աջակցման ծառայություններ,
- ⇨ դոկտորական կրթության բարեփոխում,
- ⇨ աշխատանքահենք ուսուցման ճկուն, նորարարական և գործնական շրջանակի մշակում,
- ⇨ իրավական մոտարկման լաբորատորիա ստեղծում,
- ⇨ տեղական օրենսդրական համակարգերը ԵՄ Օրենսդրության հետ մոտարկում,
- ⇨ համալսարան-տնտեսություն կապի հաստատում:

«Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության աշխատանքահենք ուսուցման ճկուն, նորարար և գործնական շրջանակի մշակում և ներդրում (ՖԼԵՔՄԲԼ)» ծրագրի գլխավոր նպատակը աշխատանքային հիմունքներով ուսուցման իրականացման համար հարթակ ստեղծելն է Հայաստանի և Ռուսաստանի բարձրագույն կրթության համակարգում:

2021թ.-ին ԲՊՀ-ի երեք լսարան գինվել է ծրագրի միջոցներով ձեռք բերված գույքով, իսկ ԲՊՀ ՊԴ և վարչական կազմը մասնակցել է [եռօրյա վերապատրաստման](#):



Էրազմուս+ ARMDOCT կարողությունների զարգացման ծրագրի շրջանակներում 2022թ. մայիսին ԲՊՀ-ի աշխատանքային խմբի ներկայացուցիչները մասնակցեցին [Վիլնյուսի համալսարանում կայացած «Դոկտորական կրթության ինստիտուցիոնալ կարգավորման շրջանակը. Վիլնյուսի համալսարանի փորձը»](#) խորագրով աշխատաժողովին: Վերջինիս մասնակցում էին ARMDOCT ծրագրի կազմում ընդգրկված ԵՄ և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների և գիտահետազոտական ինստիտուտների ավելի քան 40 ներկայացուցիչներ:



Եվրոպական ինտեգրում և այլն:

2021թ.-ին վերակնքվել է Բրիտանական խորհրդի «Ստեղծարար միտք» դրամաշնորհային ծրագրի պայմանագիրը Էսեքսի համալսարանի հետ, որի շրջանակներում ԲՊՀ-ի և գործընկեր բուհերի ուսանողները հնարավորություն են ստանում զարգացնել իրենց ստեղծարար ձեռնարկատիրական հմտությունները և կարողությունները:

«Ստեղծարար միտք» ծրագիրը Վ. Բյուլսովի անվան պետական համալսարանում իրականացվում է դեռևս 2019թ.-ից: 2021թ. «Մեծ գաղափարների մարտահրավեր» «Սոցիալական ազդեցություն» (Social Impact) անվանակարգում հաղթող ճանաչվեց ԲՊՀ թիմը՝ իր «Արդուկ» (Ardook) նախագծով:

2022թ. «Ստեղծարար միտք» ծրագրի շրջանակներում տեղի ունեցավ հայաստանյան գործընկերների ամենամյա հանդիպումը, որի ընթացքում գործընկերները ներկայացրեցին ծրագրի 4-րդ տարվա ձեռքբերումները և առաջընթացները, փոխանակեցին մտքեր՝ ապագայում ծրագրի ազդեցության կայունությանը հասնելու և ձեռնարկատիրական կրթության ներդրման համար:



2021թ. հոկտեմբերի 13-ին ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աջակցությամբ Բրիտանական խորհուրդը ԵՄ-ը բիզնեսի համար նախաձեռնության «Նորարարական տուրիզմի և տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի և «Էրազմուս+» գրասենյակի հետ համատեղ Ծաղկաձորում անցկացրեց «Ձեռնարկատիրությունը և նորարարությունը Հայաստանի բարձրագույն կրթության ոլորտում» համաժողովը, որտեղ ներկայացվեց նաև «Ստեղծարար միտք» դրամաշնորհային ծրագիրը:





**NACAR** ծրագրի նպատակն է Հայաստանում և Նորվեգիայում ակադեմիական ներուժի զարգացումը և երկու երկրների բուհերի միջև համագործակցության խթանումը՝ օտարերկրյա ուսանողների ընդունելության և ճանաչման հնատիտուցիոնալ թափանցիկ չափանիշների և ընթացակարգերի կիրարկմամբ: Ծրագիրն ուղղված է որակավորումների ճանաչման հնատիտուցիոնալ ընթացակարգերի մշակմանը:



**NACAR ծրագրի ամփոփիչ համաժողովը**

2022թ. մայիսին տեղի ունեցավ «Բուհ ընդունելության և որակավորումների ճանաչման վերաբերյալ հայ-նորվեգական համագործակցություն» (NACAR) ծրագրի ամփոփիչ համաժողովը: Համաժողովին մասնակցում էին ՀՀ բուհերի 40-ից ավել ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության աշխատակիցները: Համաժողովին ողջույնի խոսքով հանդես եկավ ԲՊՀ ռեկտոր Կարինե Հարությունյանը, ով կարևորեց հայ-նորվեգական բազմամյա բարեկամությունը, ինչպես նաև NACAR ծրագրի վերջնարդյունքները:

**ԿՈՆՆԵԿՏ** ծրագրի նպատակն է համալսարան-տնտեսություն կապի ամրապնդումը՝ հիմնված Արևելյան գործընկերության բուհերի խելացի (հարմարեցված) ձեռնարկատիրական մոտեցման վրա, ինչպես նաև ուսանողների և շրջանավարտների մրցակցային ուսումնասիրության (վարք, հմտություններ, մտածելակերպ) և աշխատատեղեր ստեղծելու կարողության զարգացումը:



**ՊԳ կազմի վերապատրաստումներ Ռուսիայում և Էրազմուս+ ԿՈՆՆԵԿՏ ծրագրի շրջանակներում**

2022 թ. ապրիլին Բուլղարիայի Հանրապետության Մոֆիա քաղաքում և 2022 թ. մարտին Ռուսիայի Հանրապետության Բուխարեստ քաղաքում կայացան պրոֆեսորադասախոսական անձնակազմի վերապատրաստումներ Էրազմուս+ ՀԳ2 Նորարարությանն ու փորձի փոխանակմանն ուղղված համագործակցություն, կարողությունների զարգացում բարձրագույն կրթության ոլորտում «Համալսարան-տնտեսություն կապի հաստատումը Մոլդովայի, Վրաստանի և Հայաստանի ուսանողների խելամիտ ձեռներեցային համագործակցության և մրցունակության միջոցով» (ԿՈՆՆԵԿՏ) ծրագրի շրջանակներում: Վերապատրաստումներին մասնակցում էին Հայաստանի, Մոլդովայի, Վրաստանի, Լատվիայի, Բուլղարիայի, Ֆինլանդիայի, Ռուսիայի բուհերի և ՀԿ-ների ներկայացուցիչները:





## Բարձրաստիճան հյուրերի և դեսպանների այցեր



ԲՊՀ-ի միջազգային տեսանելիությանը նպաստում է երկարամյա սերտ համագործակցությունը ՀՀ-ում տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների հետ: 2020-2022 թթ. ԲՊՀ-ն հյուրընկալել է մի քանի պետությունների արտակարգ և լիազոր դեսպանների՝ բազմաբնույթ կրթական և մշակութային միջոցառումների շրջանակում: Իրենց հերթին ԲՊՀ ներկայացուցիչները մասնակցել են ՀՀ-ում տարբեր երկրների դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից կազմակերպված մշակութային և տոնական միջոցառումներին:

Հատկանշական էին հետևյալ իրադարձություններ.

- ✓ ՀՀ-ում Լիտվայի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպանի նախաձեռնությամբ իրականացվել է այցելություն ԲՊՀ:
- ✓ ԲՊՀ-ում հյուրընկալվել և ԲՊՀ Արգենտինական կենտրոն է այցելել ՀՀ-ում Արգենտինայի Հանրապետության Արտակարգ և լիազոր դեսպան Ն.Գ. պարոն Մարիանո Վերգարան:
- ✓ Գիտական համագործակցության տեսանկյունից նշանակալից էր ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատան մշակույթի կենտրոնի խորհրդական Սեյեդ Հոսեյն Թաբաթաբայիի և Իրանի Ալլամե Թաբաթաբայիի անվան համալսարանի միջազգային գիտական համագործակցության բաժնի պրոռեկտոր Մանդանա Թիշեյարի այցը Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան:







✓ ՀՀ-ում Բուլղարիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Կալին Վասիլև Անաստասովը այցելեց ԲՊՀ:



✓ ԲՊՀ Ավստրիական գրադարանում ռեկտոր Կարինե Հարությունյանի և ՀՀ-ում Ավստրիայի արտակարգ և լիազոր դեսպան Ալոիս Զրաուրի հանդիպումը, որի ընթացքում քննարկվել են փոխգործակցության զարգացման, ԲՊՀ-ի և Ավստրիայի գիտակթական և մշակութային հաստատությունների միջև կապերի ընդլայնման ու խորացմանը վերաբերող հարցեր:

✓ «Ֆրանսիական գրականության օրեր» միջոցառման շրջանակում ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության համագործակցության և մշակութային հարցերի

խորհրդական Գիյոմ Նարժոլեի, Սորբոնի համալսարանի դասախոսներ Անդրե Գյույոյի և Բերնար Ֆրանկոյի, Հռոմ 3 համալսարանի դասախոս Անդրեա Սկելինոյի այցը ԲՊՀ, որից հետո Ֆրանսիայի դեսպան Անն Լույոյի հրավերով ԲՊՀ ներկայացուցիչները փոխադարձ այցելությամբ հյուրընկալվել են ՀՀ-ում Ֆրանսիայի դեսպանատանը:

✓ 2021թ. «Լեհական օրեր Հայաստանում» ծրագրի շրջանակներում ԲՊՀ-ում տեղի ունեցան աշխատաժողովներ և դասախոսություն՝ ՀՀ-ում Լեհաստանի դեսպան Պավել Չեպլակի, «Պոլոնիա»՝ Հայաստանի լեհերի միության ղեկավար և Կրակովի Յագելոնյան համալսարանի դասախոսներ մասնակցությամբ:

✓ ԲՊՀ այցելեց նաև Դոմինիկյան Հանրապետության նորանշանակ դեսպան Ֆրանկ Հանս Դանենբերգ Կաստելյանոսը:

✓ ՉԺՀ դեսպան Ֆան Յոնը հյուրընկալվեց ԲՊՀ-ում. պարզևատրվեցին «Չինարենի միջբուհական օլիմպիադայի» մասնակիցները:

✓ ՀՀ-ում Ծվեյցարիայի արտակարգ և լիազոր դեսպան Լուկաս Ռոզենկրանցն այցելեց ԲՊՀ և նվիրեց շվեյցարացի հայտնի գրողների գրքեր ու ծանոթացավ առկա գրականությանը՝ խոստանալով համալրել շվեյցարական ֆոնդը:





## Կոնֆուցիոսի ինստիտուտ

Օտար լեզուների և միջմշակութային հաղորդակցության հնտությունների տասնամյակների ընթացքում ձևավորված ավանդույթները օգնում են ԲՊՀ-ի միջազգայնացմանը և գործընկերային կապերի հաստատմանը: Ներկայումս ԲՊՀ-ում գործում է 15 օտար լեզվի և մշակութային կենտրոն, որտեղ դասավանդում են լեզվակիր մասնագետներ: Առանձնահատուկ է 2009թ.-ից ի վեր ԲՊՀ-ում գործող Կոնֆուցիոսի ինստիտուտի դերը, որի նպատակն է իրանել չինարենի ուսուցումը և նպատակ է չինական մշակութային տարածմանը: 2020-2022թթ.-ի ընթացքում կենտրոնը իրականացրել է հետևյալ աշխատանքները.



✓ Առցանց անցկացրել է ամենամյա չինարենի գրավոր և բանավոր միջազգային քննություններ (HSK և HSKK), որոնց անցկացման հեղինակային իրավունքը շնորհիվ է Հայաստանում միայն Կոնֆուցիոսի ինստիտուտին:

✓ Դալիանի օտար լեզուների համալսարանի հետ կազմակերպել է տեղացի ուսուցիչների վերապատրաստման դասընթացներ:

✓ 2021թ. Սլավոնական համալսարանում բացվել է Կոնֆուցիոսի դասարանը, որին մասնակցել է ՉԺՀ դեսպան Փան Յոնը:

✓ Հայերերն են թարգմանել, հնչյունավորել և հանրայնացրել է ավելի քան 10 չինական առասպել:

✓ Դեռևս 2019թ.ին Կոնֆուցիոսի ինստիտուտների գլխամասային գրասենյակ Հանրանի, Տալիանի օտար լեզուների համալսարանի և ԲՊՀ-ի միջև կնքված պայմանագրերով 2020թ.-ին մեկնարկել է համատեղ չինարենի ուսուցչի պատրաստման մագիստրոսական ծրագիրը:

✓ 2021թ.-ին կազմակերպել է դեսպանատան կողմից տրամադրվող դրամաշնորհների մրցույթը:





## Օտար լեզվով դասավանդվող կրթական ծրագրերի մեկնարկը



Միջազգայնացմանն ուղղված կարևորագույն ռազմավարական խնդիր է ԲԳՀ-ում օտարերկրյա ուսանողների ներհոսքի ապահովումը: 2022թ.-ին ԲԳՀ-ն դիմել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթային փաթեթը և ստացել թույլտվություն օտարերկրացիների կողմից բուհում հիմնական հետքորթություն ներկայացնող կրթական ծրագրերի անգլերեն և ռուսերեն լեզուներով դասավանդման համար: Դրանք են.

- **Բակալավրիատ**

- ✓ Լեզվաբանություն՝ Միջմշակութային

հաղորդակցություն (անգլերեն)

- ✓ Լեզվաբանություն՝ Միջմշակութային հաղորդակցություն (ռուսերեն)

- ✓ Զբոսաշրջություն (անգլերեն, ռուսերեն)

- **Մագիստրատուրա**

- ✓ Հյուրընկալության կառավարում (անգլերեն)



## Օտարերկրյա ուսանողների հարցումներ

☒ ԲԳՀ-ն կարևորում է օտարերկրյա և սփյուռքահայ դիմորդների շարունակական ընդունելությունը: Օտարերկրյա և սփյուռքահայ ուսանողների թիվը ընդհանուր ուսանողների թվաքանակի մեջ հետևյալն է.

- ☑ 2019-2020թթ՝ 2.5 % (73 ուսանող),
- ☑ 2020-2021թթ՝ 3,3% (110 ուսանող),
- ☑ 2021-2022թթ՝ 2,9% (112 ուսանող):

☒ Օտարերկրյա և սփյուռքահայ դիմորդների ներհոսքը ԲԳՀ ապահովելու, ինչպես նաև բազմալեզու և բազմամշակույթ միջավայրի ստեղծման և միջազգայնացման գործընթացների համար ԱԿՄՀ վարչությունը պարբերաբար հարցումներ է իրականացնում օտարերկրյա ուսանողների շրջանում՝ վեր հանելու ուսումնառության հետ կապված խնդիրները և բարելավելու առկա իրավիճակը:

*Հարցվածների 75%-ը ԲԳՀ-ից ստացել է լիարժեք տեղեկատվություն և աջակցություն մինչ ընդունելությունը, ավելին՝ 68.75%-ը միանշանակ, իսկ 31.25%-ը հավանաբար խորհուրդ կտան մյուսներին սովորելու ԲԳՀ-ում:*

☒ Ըստ կատարված հարցումների ԲԳՀ օտարերկրյա ուսանողների մեծամասնությունը գոհ է իր ուսումնառությունից, հիմնականում առաջացած խնդիրները կապված են հայերեն լեզվի իմացության, գրականության և դասացուցակի հետ:



## Միջազգային գիտաժողովներ և սեմինարներ

2020թ հունիսից մինչև 2022թ. օգոստոսը ԲՊՀ-ում տեղի են ունեցել բազմաթիվ միջազգային գիտաժողովներ և սեմինարներ՝ ուղղված օտար լեզուների դասավանդմանը, արտասահմանյան գրականությանը և միջմշակութային հաղորդակցությանը և այլ թեմաներով, մասնավորապես.

- ❖ Գ. Ֆլորերի և Շ. Բողերի 200-ամյա հոբելյանին նվիրված **«Ֆրանսիական գրականության օրեր»** միջոցառումը, որի ժամանակ գիտական զեկույցներով հանդես եկան Ֆրանսիայի Սորբոնի համալսարանի դասախոսներ Անդրե Գյույոն և Բերնար Ֆրանկոն, Հռոմ 3 համալսարանի դասախոս Անդրեա Սկելինոն: ԲՊՀ ռեկտոր Կ. Հարությունյանի կողմից ԲՊՀ պատվավոր պրոֆեսորի կոչմանն արժանացավ Սորբոնի համալսարանի դասախոս Բերնար Ֆրանկոն, ով ԲՊՀ-ի և Սորբոնի համալսարանի համագործակցության շրջանակում ղեկավարում է ԲՊՀ ուսանողների մագիստրոսական թեզերը և ԲՊՀ ասպիրանտների թեկնածուականատենախոսությունները:
- ❖ **«Գերմաներեն՝ այստեղ և հիմա»** խորագրով Գերմաներենի ուսուցիչների 5-րդ *համաժողովը*՝ նվիրված ԲՊՀ Գերմաներենի ամբիոնի 85 ամյակին:., որը առանձնանում էր իր գիտական բաղադրիչով և Հայդելբերգ-Հայաստան-Վրաստան ձևաչափով
- ❖ **«Լեզու, մշակույթ, կրթություն»** խորագրով միջազգային գիտաժողով, որի նպատակն էր ներկայացնել և քննարկել ժամանակակից կրթության զարգացման միտումները, լեզվակրթության քաղաքական և ապագա մասնագետների պատրաստման գործընթացը: Գիտաժողովին մասնակցում էին նաև թվով չորս օտարերկրյա մասնագետներ, ովքեր առցանց ներկայացրին իրենց զեկույցները:
- ❖ Ռուսաց լեզվի XIV օրերի շրջանակներում անցկացվող Անկախ Պետությունների Համագործակցության կազմավորման 30-ամյակին նվիրված **«Русский язык в формате 3D:лингвистика, образование, культура»** 4-րդ Միջազգային գիտաժողովը:

